

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ «ԿԻՐԱԿԻ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՈՐՊԵՍ ՀԵՂԻՆԱԿԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՆԳՐՎԱՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.151

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության է առնվում Վանո Սիրադեղյանի ստեղծագործական առաջին ժողովածուն՝ «Կիրակի»-ն, որն ուղենշում է հեղինակի ստեղծագործական առաջին շրջանը: Դեռևս 1978թ. Սիրադեղյանը հայտնի է գրական շրջանակներում՝ հաշվի առնելով իր առաջին ստեղծագործությունների հրատարակությունները ժամանակի գրական մամուլում՝ մասնավորապես «Գարուն» ամսագրում: Առաջին պատմվածքների հրապարակումից հետո գրական որոշակի ուշադրության արժանացած հեղինակը երկար սպասեցնել չի տալիս, և ահա «Կիրակի» ժողովածուի լույս ընծայումն է, որ պայմանավորում է հեղինակի հետագա գրական ընթացքը:

Հեղինակն իր ժողովածուում աչքի է ընկնում հետաքրքիր դիտողականությամբ, իսկ նրա ստեղծագործությունները, խոշոր հաշվով, դառնում են «փոքր մարդու» խնդիրների վերհանման, նրանց հոգեբանության և մտածողության արծարծման հարթակ՝ բացահայտելով այն բոլոր տեղաշարժերը, որոնք տեղի են ունենում անհատի հոգեբանության մեջ:

Բանալի բառեր և արտահայտություններ. արձակ, պատմվածք, Վանո Սիրադեղյան, «Կիրակի» ժողովածու, հոգեբանություն, գրական մուտք, գրական քննադատություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վանո Սիրադեղյանի գրական մուտքը անմիջապես ընդգծվեց գրականագիտական քննարկումներում՝ հարուցելով քննադատական

արձագանքների համեմատաբար խտացված հոսք: Գրական միջավայրում նրա ի հայտ գալը դիտարկվեց որպես ուշագրավ, գեղարվեստական առումով ինքնատիպ երևույթ, ինչը բացատրում է այն հանգամանքը, որ առաջին իսկ հրապարակումներն արժանացան թե՛ մեկնաբանության, թե՛ մեկնողության փորձերի: Այդ փուլում արտահայտված գրախոսությունները միտված էին միաժամանակ և՛ վերլուծելուն, և՛ արժևորելուն, և՛ որոշ չափով ուղղորդելուն՝ հաշվի առնելով նրա ստեղծագործական գծի նորարարական բնույթը:

Հատկանշական է, որ Սիրադեղյանի գրական մուտքը տեղի ունեցավ այն ժամանակաշրջանում, երբ հայ արձակի դաշտում նոր անունների առկայությունը դեռևս ապահովում էր ստեղծագործական շարունակականությունը, իսկ գրական միջավայրը բնութագրվում էր գեղարվեստական որոնումների և ժանրային փորձարարությունների ակտիվությամբ: Նրա սերնդակիցներից մի շարք հեղինակներ՝ Արտաշես Ղահրիյան, Վրեժ Իսրայելյան, Ռաֆայել Նահապետյան, Ռուլանդ Շառոյան, Դավիթ Մուրադյան և այլք, նույնպես հանդես եկան նշանակալի տեքստերով, սակայն գրաքննադատական ընկալման դիտանկյունից Սիրադեղյանի գրական մուտքի շուրջ ձևավորվեց որոշակի ինտենսիվություն:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը կատարվել է համադրական-վերլուծական մեթոդով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գրական դաշտում Սիրադեղյանի ընկալումը, ինչպես վկայում են առաջին գրախոսությունները, չի եղել միարժեք: Գրականագիտական արձագանքներում զուգահեռաբար առկա էին թե՛ բարձր գնահատման, թե՛ սուր քննադատության բաղադրիչներ: Վերջինս հատկապես բնորոշ էր այն գրախոսություններին, որոնց հեղինակները մասնակցել էին 1960–1980-ական թվականների ընթացքում ընթացող լայնածավալ բանավեճերին հայ արձակի ուղղությունների վերաբերյալ: Քանի որ Սիրադեղյանի ստեղծագործական ուղին հաճախ դիտարկվել է որպես Հրանտ Մաթևոսյանի գեղարվեստական հայեցակարգի շարունակություն, ապա այն քննադատները, որոնք նախկինում հանդես էին եկել ընդդեմ այդ ուղղության,

բնականաբար, նաև Սիրադեղյանի նկատմամբ ցուցաբերել են որոշակի հակադրական մոտեցում:

Ընդհանրական գնահատմամբ՝ Վանո Սիրադեղյանի գրական մուտքը կարող է բնութագրվել որպես հաջողված մշակութային երևույթ՝ թե՛ գրաքննադատական ընկալման ծավալով, և թե՛ նրա ընթերցողական ազդեցության պոտենցիալով:

Գրական մամուլում տպագրված առաջին պատմվածքների շուրջ քննարկումները, նոր ու խոստումնալից արձակագրի մուտքն ազդարարող համակրական հոդվածների ու գրական շրջանակներում հայտնված տեսակետների շրջանառությունը ստեղծել էր որոշակի սպասման շրջան, որը կամ պիտի հաստատվեր, կամ հերքվեր Վանո Սիրադեղյանի ստեղծագործական նոր երևումների տպավորությամբ:

Սիրադեղյանի առաջին՝ «Կիրակի» վերնագրով ժողովածուն լույս տեսավ ահա այսպիսի գրական-գնահատողական համատեքստում: Այն հիմնականում ամփոփում էր հեղինակի՝ մամուլում հրապարակած պատմվածքները և մի քանի նոր գործեր: Ծանոթ պատմվածքներն այստեղ երևում էին նոր լույսի տակ, որովհետև Սիրադեղյանը ստեղծել էր նոր համակարգ, որտեղ արդեն ծանոթ կերպարները, նրանց գոյության ու դրսևորումի կերպը առավել ընդհանրացված էին ներկայացնում գրողի ստեղծագործական միտումները:

«Կիրակի» ժողովածուն ինչ-որ չափով պայմանավորում է 1980-ականների գրական ընթացքի ճանապարհը, առաջ բերում գեղարվեստական նոր որակներ, արտացոլում է իրականությունն ու կերտում կերպարային նոր ոճ ու հայեցակարգ: Սա հեղինակի հերթական խիզախումն է մարդու և ժամանակի, մարդու և տարածության նոր փոխհարաբերությունների պատկերման առումով: Սա իրապես հաջողված նորամուտի գիրք է, որը գուցե կարողանանք համեմատել Հրանտ Մաթևոսյանի առաջին գրքի՝ «Օգոստոսի» հետ թե՛ բովանդակային ընդգրկման, թե՛ հաջողության, թե՛ խոստացած շարունակության առումով:

Պետք է նկատել, որ հեղինակն այս գրքով առաջ է բերում հետաքրքիր նորարարություն, որը պայմանավորված էր նրա հայացքի մեկնակետով, թարմությամբ և անսովորությամբ: Հայ ընթերցողն այդ ժամանակ արդեն բավականին փորձառու էր, արդեն ծանոթ էր ճշմարիտ, ռեալիստական ու դիպուկ արձակին («մեղավորը» Հրանտ Մաթևոսյանն էր): Իսկ ի՞նչն էր, որ նրան տպավորեց այս անգամ: Նոր հեղինակն առաջ բերեց լրիվ նոր հայացք, մարդու հոգեբանությունն ու նրա հոգու և մտածումների գաղտնի անկյունները տեղափոխող արձակ, որը սենտիմենտալ չէր, պաթետիկ չէր, կենդանի էր՝ առավել քան երբևէ:

«Վերջին տարիների «Առաջին գրքերի» մեջ նկատելիորեն առանձնանում է Վանո Սիրադեղյանի «Կիրակին», – գրում է գրականագետ Պետրոս Դեմիրճյանը:– Այս հեղինակն արդեն հանդես է բերում գրողական հասունություն, պատկերվող նյութի նկատմամբ ազատություն ու տիրապետություն, հոգեբանական վերլուծությունների հմտություն: Բայց ամենակարևորը, որ շահեկանորեն առանձնացնում է նրա գիրքը մյուսներից, հարցադրումների սոցիալական պայմանավորվածությունն է: Վ. Սիրադեղյանը քիչ տեղ է հատկացնում հերոսների քնարական զեղումներին, գեղեցկախոսությանն ու հոգեկան տվայտանքների նկարագրություններին: Նրա հերոսները բացվում են այս կամ այն բնորոշ իրադրության կամ վիճակի մեջ, որոնց կենտրոնում գրեթե միշտ առկա է ապրելու հոգսը» (Դեմիրճյան Պ., 1986):

Սիրադեղյանը հաջողել էր կյանքի արտաքին ու ներքին շերտերի նկարագրություններում, կարողացել էր արձակի տարածության մեջ միահյուսել զգացականն ու ռացիոնալը՝ ստանալով ռեալիստական արձակի նոր տիպ, որն ասես կլանող էր և կախարդական: Դրա բանալին ռիթմն էր ու նյութի բարձր զգացողությունը:

Ռիթմին դեռ առիթ կունենանք անդրադառնալու, իսկ հիմա մի քանի խոսք նյութի մասին:

Սիրադեղյանի պատմություններն ունեն առանձնացող կենսական տրամաբանություն: Սակայն կյանքից վերցված դրվագները, որոշակի օրինակներն ու տպավորությունները պատկերելը դեռևս գրականություն չեն ստեղծում, գրականություն չի ստեղծում նաև հերոսների՝ ճշգրիտ նախատիպեր ունենալը: Միայն դրանցով հնարավոր չէ գեղարվեստական ճշմարտության հասնել, որովհետև գրականությունը չի զբաղվում իրականության սոսկական ցուցադրությամբ: Այն ստեղծվում է այդ պատկերների, պատմությունների բովանդակային շերտերի վերհանմամբ, հերոսների բնավորության, մտածողության, հոգեբանության ուսումնասիրությամբ, ճշգրիտ մեկնաբանմամբ: Վա՛նո Սիրադեղյանը կարողանում է տեսնել և, որ պակաս կարևոր չէ, արտացոլել կյանքի դրաման, թափանցել երևույթների խորքը: Գրողը կարողանում է դրանք իմաստավորել, մեկնաբանում և ուսումնասիրում է գրողական բարձր դիտողականությամբ՝ դրանով իսկ բացահայտելով ոչ միայն բուն նյութը, այլև ինքն իրեն:

Այս ամենից ելնելով է, որ Սիրադեղյանի պատմվածքներում դրսևորվում է ներքին կոնֆլիկտի բարձր զգացողություն, որի միջոցով հեղինակը կարողանում է վեր հանել իր հերոսների ներքին և արտաքին խնդիրները, տալ դրանց բնորոշումն ու միջամտել դրանց լուծումներին: Կիմ Աղաբեկյանը ճշգրտորեն նկատում է. «Խոսել կոնֆլիկտի մասին, ինչպես նկատում է քննադատությունը, նշանակում է խոսել այն մասին, թե ինչպես է հեղինակը հասկանում հասարակության ներսում մարդկանց միջև ծավալվող փոխհարաբերությունները, նրանց ինչպիսի և որ հոգսերն է համարում առաջնային, մարդկային ինչ որակների հետ է կապում հետագա սոցիալ-բարոյական առաջընթացը» **(Աղաբեկյան Կ., 1988)**: Ահա հենց այս հիմքերից է սնվում Սիրադեղյանի արձակը, իսկ հեղինակի առաջնահերթությունը մնում է մարդու կյանքի բարոյական կողմերի քննությունը: Հեղինակի հայացքը չափազանց խորաթափանց է, հայացքի դիտանկյունը՝ բազմազան, և որ ամենակարևորն է, Սիրադեղյանը իր ժամանակն ու հասարակության, ժողովրդի մտածողությունը

զգում և նկարագրում է չափազանց դիպուկ: Սա խոսում է գրողի մեծության և գրականության ճշմարտացիության մասին:

Սիրադեղյանի կերտած հերոսները ոչ միայն չափազանց մոտ են կանգնած կյանքի սոցիալական երևույթներին, այլև այդ սոցիալական երևույթների հետ նույն ընթացքի մեջ են: Նյութի, հերոսների, հեղինակային անկեղծության ու դիտանկյունների բազմազանության, մարդու, ժամանակի և այդ ժամանակի զգացողության արտացոլումն է Սիրադեղյանի արձակը:

«Կիրակի» ժողովածուն, բացի մեր կողմից արդեն քննարկված պատմվածքներից, ներառեց նաև մի քանի այլ գործեր, որտեղ հեղինակը վերահաստատեց իրեն տրված բնորոշումներին արժանի լինելը:

Ինչպես յուրաքանչյուր ճշմարիտ գրող, Սիրադեղյանը ևս իր պատմվածքների տարածություն ընտրեց իրականությունը, հերոսներին՝ իրական, անմիջական և հասարակ: Պետք է նկատել, որ եթե «Թերեզի երջանկությունը» պատմվածքում հեղինակը խորասուզվել էր հերոսուհու հոգեբանության տիրույթներում, «Դուռը» պատմվածքում՝ Մայիսի, ապա մյուս պատմվածքներում մեզ սպասում են նմանօրինակ տարբեր հերոսներ, որոնց հեղինակը ուսումնասիրում է անշտապ: Գտնելով նրանց կյանքի նշանակալի դեպքերը, նրանց մտածողության յուրօրինակ կետերը՝ նա կենտրոնանում է դրանց վրա՝ դուրս բերելով հետաքրքրականը, տիպականն ու խնդրահարույցը:

Հետաքրքրական է մի երևույթ ևս. Սիրադեղյանի «Կիրակի» ժողովածուի տասներկու պատմվածքներից յոթը սկսվում են հերոսների անուններով, մյուսների առաջին նախադասություններում երևում են հենց հերոսները՝ իրենց մտածումներով: Սա խոսում է այն մասին, որ հեղինակը ոչ թե սոսկ ձգտում է պատմություններ պատմել, այլ ընտրում է հերոսներին, որոնց շուրջ էլ հյուսվում են պատմությունները, այսինքն՝ նյութը ոչ թե պատմությունն է, այլ հերոսը, մարդը՝ իր հոգեբանությամբ և առօրյայով: Հենց սրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ Սիրադեղյանի հերոսները տարբերվող են և տիպական: Հեղինակը հերոսներին գտնում և տարրորոշում է իրենց պատմություններով:

Որպեսզի ուսումնասիրի հերոսների վարքը, գրողը նրանց դնում է իր լաբորատորիայի խոշորացույցի տակ՝ տարբեր պայմաններ ստեղծելով նրանց կենսագործունեության համար: Այսինքն՝ հերոսներին ուսումնասիրել կարելի է մասնավորապես այն դեպքում, երբ նրանց շուրջ որևէ բան է կատարվում: Սիրադեղյանը նախընտրում է ոչ թե բնութագրել իր հերոսներին, այլ այդ հերոսներին ցույց տալ գործողության մեջ. գործողությունն է, որ բնութագրում է հերոսին: Այդպես է թե՛ Թերեզի, թե՛ Մայիսի, թե՛ Սոնայի, թե՛ Սաքոյի և թե՛ մյուս հերոսների պարագայում:

Հերոսների ընտրությունը չափազանց հետաքրքիր է, քանի որ հերոսները կարծես պատահականորեն ընտրված մարդիկ չեն: Նրանք հաճախ գյուղացի հերոսներ են, հաճախ էլ՝ գյուղից քաղաք տեղափոխված կամ քաղաքից գյուղ վերադարձած հերոսներ, այսինքն նկատելի է նաև գյուղ-քաղաք հակադրության, համեմատության կոնցեպտ: Այս ամենին դեռ կանդիդատնանք:

Նախքան «Կիրակի» ժողովածուի հրապարակումը՝ 1981 թվականին, Սիրադեղյանի ստեղծագործությանն անդրադարձ է կատարում Լևոն Հախվերդյանը իր ««Առակդ զի՞նչ ցուցանե» կամ՝ վերլուծական մեկնության ու եզրահանգման մասին» հոդվածում: Գրականագետը փորձում է քննել ու վեր հանել Սիրադեղյանի ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: Անհրաժեշտ է նշել, որ հոդվածի փորձառու հեղինակը ցանկության դեպքում կարողանում է ճշգրիտ գնահատականներ տալ: Հոդվածի ներածական հատվածում Հախվերդյանը գրում է. «Կարծես իրավաբանության մասին է խոսքը. այստեղ է, որ դեպքը վերլուծվում, մեկնաբանվում է, ապա և հերթը գալիս է եզրահանգմանը: Բայց տե՛ս որ գրողի, հատկապես արձակագրի գործն էլ հեռու չէ դրանից. նա ևս նկարագրում է որևէ դեպք կամ դեպքերի շարք, այդ ընթացքում և վերլուծության է ենթարկում նյութը, և՛ մեկնաբանության, և՛ հանգում եզրակացության: Կան գրվածքներ, որոնց մեջ դրանք պարզորոշ տարբերակվում են (դա առավել նկատելի է հրապարակախոսական արձակում), գրվածքներ էլ, որոնց մեջ դրանք թաքցվում,

քողարկվում են այն աստիճան, որ բացահայտ չեն երևում: Եվ որքան հմուտ է գրողը, այնքան ավելի լավ է թաքցնում» (**Հախվերդյան Լ. , 1984**):

Ըստ էության, Հախվերդյանը առաջ է քաշում գեղարվեստական գրականության ընկալման, դրա գեղագիտական հիմքերի մասին հստակ և ճշգրիտ դրույթ, որով էլ, կարծում ենք, պետք է արժևորվի Սիրադեղյանի ստեղծագործությունը, քանի որ Սիրադեղյանի ասելիքը, Հախվերդյանի ձևակերպմամբ՝ «առակի զինչ ցուցանելը», չափազանց նուրբ և չափազանց զգուշորեն է թաքցված պատմվածքների տողատակերում: Գրականագետը, իհարկե, հասկանում է այդ ամենը, և իզուր չէ, որ նա առաջ է քաշում այս միտքը: Սակայն, որքան էլ զարմանալի թվա, հոդվածի հաջորդող տողերում կամաց-կամաց նկատվում են Հախվերդյանի իրարամերժ մտածումները: Հեղինակը կարծես դժվարացել է գտնել Սիրադեղյանի այս կամ այն պատմվածքի ասելիքը: Նա ընկալել է բերում «Չտեսության հովիտ» պատմվածքը, որի վերաբերյալ գրում է. «Գրական տեխնիկայով գրված է լավ, այդ իմաստով՝ հեղինակի լավագույն գրվածքներից մեկը: Բայց թե ի՞նչ է ուզում ասել գրողն իր նուրբ վերլուծումներով, խնամված շարադրանքով՝ ինձ համար գոնե դժվար եղավ կռահելը» (**Հախվերդյան Լ. , 1984**): Հեղինակը հաջորդ պարբերության մեջ փորձում է վերլուծել իրադարձությունները՝ պատմվածքի սյուժեն վերապատմելուց անդին չգնալով: Դժվար թե «Թերեզի երջանկությունը» պատմվածքն ամենայն մանրամասնությամբ գնահատող, վերլուծող և ընկալող գրականագետը (ինչն ինքը ապացուցում է հոդվածի մյուս հատվածներից մեկում) չկարողանար ընկալել և գտնել «Չտեսության հովիտ» պատմվածքի բանալին: Չենք ցանկանում մեղադրել գրականագետին դիտավորության մեջ. գուցե իրապես նրա հայացքը վրիպել է պատմվածքի բուն ասելիքը գտնելու հարցում:

Այնուամենայնիվ, «Չտեսության հովիտ» պատմվածքի մեկնաբանությունը կարելի է սկսել հենց վերնագրից: Սա պատմություն է մի գյուղի մասին, որի բնակիչները չտեսություն են ցուցաբերում մի աղջնակի՝ Անժիկի հանդեպ: Հերոսները դպրոցահասակ տղաներ են, որոնց ուշքն ու միտքը պտտվում է շուտ

հասունացած Անժիկի շուրջը: Պետք է հասկանալ Անժիկի կերպարը, նաև ամբողջ պատմվածքի ասելիքը: Սիրադեղյանը չափազանց մանրամասն ու դիպուկ է նկարագրում գնացքի կայարանը: Սա նկատում և արձանագրում է նաև Հախվերդյանը. «Պատումի միջավայրը՝ մի ավան, որ երկաթուղային կայարան է, նկարագրված է այնքան ստույգ, որ աչքիդ առաջ ներկայանում են հյուսիսային Հայաստանի խտաբնակ, բազմախրճիթ կայարանները» (**Սիրադեղյան Վ. , 2021**): Այս պատկերը հետագայում պիտի բանալի հանդիսանա հերոսուհու ճակատագիրն ընկալելու համար: Սիրադեղյանը նաև չի զլանում և կանխագուշակման, հետագա գործողությունների բացատրման մի քանի բանալի է տալիս պատմվածքում: Սակայն ի՞նչն է կարևորը. հերոսուհին չափազանց կապված է կայարանի հետ, կայարանը կարծես ազդարարում է նրա կյանքի սկիզբը. «Մայրը հայ էր՝ էլյա գրքային, տարաշխարհիկ անունով, այդ տարիների համար շատ էր սպիտակամաշկ ու խնամված, երևում էր՝ ամուսնուն պատերազմ ճանապարհելուց հետո պատերազմի ու հետպատերազմյան դժվար տարիները ապրել է առանց նախապաշարումների, և նրանից պիտի որ Անժիկ ծնվեր: Եվ գնացքից հինգ րոպեով իջած մեկից պիտի որ Անժիկ ծնվեր» (**Սիրադեղյան Վ. , 2021**):

Հեղինակը պարբերաբար խոսում է Անժիկի՝ գյուղինը չլինելու մասին: Նա գյուղինը չէր եղել ի սկզբանե՝ իր ծնվելու պահից իսկ: Գյուղի տղաներինը չէր եղել ու գյուղում չէր մնալու. «Անժիկի արյունը ուրիշ արյուն էր» (նույն տեղում): Սա հուշում է, որ այս աղջիկը, որը մեծանում էր «ինչպես բամբուկի ծիլ-ծաղիկ՝ փուչ ու հմայիչ, փուչ ու հեշտ տրվող բուֆ դանակի հպումին անգամ, փուչ ու անհրաժեշտ Շենին», չէր մնալու այդ գյուղում: Նա պիտի հեռանար:

Պատմվածքը նրա հեռանալու մասին է, որը կանխագուշակվում է պատմվածքի տարբեր հատվածներում՝ սկզբից մինչև վերջ: Անժիկի արյան ուրիշ լինելու մասին հեղինակի նկարագրությունը ցույց է տալիս, որ այն, ինչը որևէ մեկինը չէ ի սկզբանե, այդ որևէ մեկին չի մնալու: Սա իրերի՝ իրենց տեղն ընկնելու մասին է խոսում: Նաև Անժիկի՝ իր գյուղին անպիտան լինելը չի արդարացվում:

Նա մասը չէ այն հասարակության, որում ապրում է, իսկ լուծումը պիտի լինի հեռացումը, այդ հասարակությունից փախուստը, որն էլ տեղի է ունենում պատմվածքի ամենավերջում: Հեղինակը միևնույն ժամանակ քննում է անհասանելի գեղեցկության էությունը, իսկ իր վերաբերմունքն ի ցույց է դնում բամբուկի ծաղկի հետ համեմատության մեջ: Ըստ էության, սա Մաթևոսյանի «Նարիջ զամբիկը» պատմվածքի բովանդակային գուգահեռն է՝ փուչ գեղեցիկի ու միևնույն ժամանակ այդ գեղեցկության հեռացման գաղափարական ընդգրկման կոնցեպտում: Ահա թե «զինչ ցուցանե առակը»:

Այո՛, Սիրադեղյանը բավական հմուտ կերպով իր տողերում թաքցրել է բախումը, բախումը հասարակության և անհատի, արժեհամակարգերի տարբերության, հասարակության մեջ առանձնացող և այդ իսկ հասարակության տիպական հերոսների, որն էլ տարբերվող հերոսին վանում է այդ հասարակությունից: Սակայն մի՞թե այդ թաքցնելու հմտությունը չէր կարևորում Հախվերդյանը հոդվածի սկզբում. «Եվ որքան հմուտ է գրողը, այնքան ավելի լավ է թաքցնում» (**Հախվերդյան Լ. , 1984**): Ահա և հոդվածի հակասական կողմը:

Այնուամենայնիվ, Հախվերդյանը հոդվածն ավարտում է լավատեսորեն. «Թվում է, որ նման դիտողություններն անկարևոր չեն, երբ խոսքը վերաբերում է ճշմարիտ տաղանդի տեր, իսկական արվեստի նախադռանը կանգնած գրողին: Այլապես այս հոդվածը գրելն անգամ ավելորդ կլիներ» (**Հախվերդյան Լ. , 1984**):

Պետք է նկատել նաև, որ գրականագետը մասնագիտական էթիկայի որոշ խախտումներ ևս թույլ է տվել, որոնք գուցե անփութության և անուշադրության հետևանք են: Հախվերդյանը գրել է հոդված մի հեղինակի մասին, որի ստեղծագործությանն այնքան էլ ծանոթ չէ: Կողմնակալ վերաբերմունք չարտահայտելու համար ասենք միայն, որ Հախվերդյանն անդրադարձել է Սիրադեղյանի համեմատաբար թույլ պատմվածքներին, որոնք էլ հնարավորություն են տվել նրան առավել «հարմար» քննադատական դիրքերից հանդես գալու:

«Կիրակի» ժողովածուի հրատարակումից շատ չանցած՝ եղան նոր արձագանքներ, որոնցից մեկը Զավեն Ավետիսյանի «Սեփական ձեռագրի վկայությամբ» գրախոսականն էր, որը լույս տեսավ «Գրական թերթում»։ Ավետիսյանը մեծ համակրանքով է խոսում Սիրադեղյանի մասին՝ ասելով, որ «...հաջողվել է «խորամանկ չեզոքությամբ», սուս ու փուս, առանց իր հերոսների դոճերը ծեծելու, առանց բարևելու մտնել նրանց տները, նրանց հոգու աշխարհը և իր տեսածն ու զգացածը թղթին տալ գեղարվեստի լեզվով» (**Ավետիսյան Զ. , 1983**)։ Ավետիսյանը չափազանց բարձր է գնահատում Սիրադեղյանի կերտած հերոսներին, նրանց նկարագրելու գրողի կերպն ու մոտեցումը։ Գրականագետը պնդում է, որ Սիրադեղյանի պատմվածքներում սյուժետային գիծն այնքան ուժեղ և ամուր է արտահայտված, որ պատկերային կորուստներ չկան, միևնույն ժամանակ կա ռիթմի բարձր զգացողություն։

Քննադատը նկատում է նաև մեր կողմից արդեն նշված այն հատկանիշը, ըստ որի՝ Սիրադեղյանը չափազանց լավ է ճանաչում այն մարդկանց, որոնց մասին գրում է։ Սա ակնհայտ է դառնում հեղինակի չափազանց նուրբ և դիպուկ նկարագրություններում, հոգեբանական արձակին բնորոշ բարձր զգացական պատկերներում։

Ավետիսյանը իր հոդվածում տարբեր պատմվածքների դրվագների վերլուծությամբ արձանագրում է Սիրադեղյանի իրապես չափազանց ամուր գրական մուտքը՝ հոդվածն ավարտելով հետևյալ եզրակացությամբ. «Վանո Սիրադեղյանը կյանքի պարզ ճշմարտությունների բարդ աշխարհը բացահայտող արձակագիր է. իր առաջին գրքով արդեն իսկ սեփական ձեռագիր ունեցող հեղինակ» (**Ավետիսյան Զ. , 1983**)։

Իհարկե, զարմանալի չէ գրականագետի նման վերաբերմունքը Վանո Սիրադեղյանի առաջին գրքի նկատմամբ, որովհետև «Կիրակին» իրապես լուրջ երևույթ է 70-80-ականների մեր գրականության մեջ։ Այն ուղենշային կարևորություն ունի մեր գրականության ինչպես հետագա զարգացման, այնպես էլ նախորդող շրջափուլի ամփոփման համատեքստում։

Հաջորդ արձագանքը մեր կողմից արդեն իսկ հիշատակված Ազատ Եղիազարյանի «Պատմություններ ծանոթ մարդկանց մասին» գրախոսությունն է: Եղիազարյանը ևս մեծ համակրանքով է խոսում Սիրադեղյանի մասին: Նա առաջ է քաշում բոլոր այն տեսակետները, որոնք մենք տեսանք Զավեն Ավետիսյանի հոդվածում. «Սիրադեղյանի պատմվածքները կյանքից են գալիս և ոչ թե երևակայությունից, ոչ թե մտահայեցողական կառուցումների սիրուց: Անհնար է չճանաչել նրա նկարագրած միջավայրը, նրա հերոսներին, չուրախանալ հեղինակի դիտողականությամբ, մարդու նկատմամբ նրա ուշադրությամբ» **(Եղիազարյան Ա. , 1984):**

Եղիազարյանն իր հերթին կարևորում է Վանո Սիրադեղյանի այն հատկանիշը, որ հեղինակը կարողանում է խորանալ և վերլուծել մարդկային ապրումներն ու զգացողությունները: Ըստ նրա՝ Սիրադեղյանը ստիպում է իր հերոսների հանդեպ ոչ թե խղճահարություն զգալ, այլ սեր և ըմբռնում: Սա չափազանց կարևորվում է նաև այն առումով, որ այդ միտումը հերթական ամուր հարվածն էր էժան սենտիմենտալիզմով պարուրված գրականությանը, որն ուրախալի է:

Եղիազարյանը խոսում է նաև Սիրադեղյանի թեմատիկ նախընտրությունների մասին՝ ասելով, որ նա կարողանում է պատկերել կենցաղը, այնինչ իր գրածը ոչ մի կապ չունի կենցաղագրության հետ: Հղում կատարելով «Литературная газета»-ին՝ Եղիազարյանն ասում է, որ բոլորը խոսում են կենցաղագրության վտանգի մասին, այնինչ պետք է տեսնել, թե ինչպես է Սիրադեղյանը կարողանում օգտագործել կենցաղային տարաբնույթ երևույթներ և դրանք ծառայեցնել միմիայն մեկ նպատակի՝ հերոսների նկարագրությանը, նրանց ապրումների մեկնաբանությանը՝ սակայն ոչ երբեք կենցաղագրության ծանծաղ տարածություն մտնելով:

Եղիազարյանը փորձում է սահմանել Վանո Սիրադեղյանի գրականության տարբերակիչ հատկանիշները՝ նշելով նրա ընտրած գրական տարածության բնականությունը, կերպարակերտման բարձր հմտությունը՝ դրա մեջ

առանձնացնելով հոգեբանական խորացումներն ու զգացականության արտահայտությունը:

Հոգվածի վերջում գրականագետը ևս մեկ անգամ իր ուրախությունն ու լավ տպավորությունն է կիսում Սիրադեղյանի մասին՝ ասելով. «Բայց, ի վերջո, իր որակի մեջ գրքույկը միանգամայն հաջողված է: Հեղինակը ձևավորված գրող է, իր հերոսների պատկերասրահը նա նույն ոգով կարող է շարունակել ու մեծացնել, և նրա նոր պատմվածքներն էլ կարող են հաջող ու հետաքրքրական լինել: Սակայն դա վտանգավոր կլինի երիտասարդ հեղինակի համար: Նրան հորիզոններ են պետք՝ ոչ թե իր հերոսներից հրաժարվելու, ոչ թե հոգեբանական նուրբ դիտումները մի կողմ դնելու համար, այլ դրանք հարստացնելու, աշխարհի ավելի լայն համապատկերի մեջ ներկայացնելու համար, աշխարհի հուզող մեծ խնդիրներին մոտեցնելու համար: Ահա այս միակ ցանկությունն է, որ կուզենայի ուղղել տաղանդավոր (չվախենանք այս բառն օգտագործելուց, գիրքն այդ իրավունքը տալիս է) Վանո Սիրադեղյանին» **(Եղիազարյան Ա. , 1984):**

«Կիրակի» ժողովածուի մասին խոսում է նաև Ալվարո Պետրոսյանը «Գրողական ինքնության վկայությունը» հոդվածում, որտեղ իր կողմից ընտրված մի քանի հեղինակների կողքին է նաև, իհարկե, Վանո Սիրադեղյանը: Պետրոսյանն արժևորում է Սիրադեղյանի դիտողականության մակարդակը, կերպարներ ստեղծելու նրա ունակությունն ու նյութի բացառիկ իմացությունը. «Փոքրածավալ պատմվածքներում արձակագիրը զուսպ զգացմունքայնությամբ և պատմելիք նյութի խոր իմացությամբ է նկարագրում բնական միջավայրից կտրված, դրանից ծնվող աններդաշնակության ողբերգությունը կրող իր հերոսների սովորական կյանքը, որը հենց ողբերգական է կենսական հարցերի իր փոքրիկ չափումներում» **(Պետրոսյան Ա. , 1984):**

Կարծում ենք՝ Պետրոսյանի հոդվածը դրական արձագանքներ պարունակող հերթական նյութ է, որը, իհարկե, գնահատում ենք: Սակայն մի նկատառում ունենք Պետրոսյանի հոդվածի հետևյալ հատվածի վերաբերյալ. «...Չեմ կարող մի դիտողություն չանել հեղինակին՝ դա պատմելիք նյութի

միօրինակ, սևեռուն սահմանափակությանն է վերաբերում: Տասներկու պատմվածքներից առյուծի բաժինը մի թեմայի մասին է, և այն, ինչ արդարացված է գրողական վարպետությամբ իրագործված գործերում, կարծում եմ արդարացված չէ գրողի հետաքրքրությունների շրջանակի սահմանափակությամբ» (**Պետրոսյան Ա. , 1984**):

Կարծում ենք՝ Ալվարդ Պետրոսյանը մի փոքր վրիպել է իր այս դիտարկման մեջ, քանի որ գուցե ամբողջությամբ չի դիտարկել «Կիրակի» ժողովածուն: Այդ գիրքը ամբողջական և փակ համակարգ է՝ իր բոլոր պատմվածքներով: Ժողովածուն ունի կոնցեպտուալ մոտեցում, ընդհանուր դիտանկյուն և կախված այդ դիտանկյունից՝ մեկ ասելիք և նպատակ՝ համակարգի մեջ առանձնացող անհատների ճակատագիրը: Չենք կարծում, թե Պետրոսյանը իր այս խոսքում նկատի է առնում ընտրված տարածությունը, քանի որ տեսնում ենք, որ «Կիրակին» ոչ միայն գյուղական տարածության վրա է սևեռվում, այլև քաղաքային: Կան պատմվածքներ, որոնց իրացման տարածությունը քաղաքն է: Հետևաբար միօրինակությունը չի կարող վերաբերել տարածության հարցին: Այն վերաբերում է հեղինակի ընտրած թեմային:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Վանո Սիրադեղյանի «Կիրակին» պարզապես ընտրանի կամ գիրք չէ, որը պարունակում է հեղինակի տարբեր ստեղծագործություններ, այլ ժողովածու է՝ հստակ ընտրված պատմվածքներով և այդ պատմվածքների կոնցեպտուալ ներտեքստային կապերով:

Այս ժողովածուն առաջին և չափազանց վստահ քայլն էր դեպի մեծ գրականություն, դեպի ուր էլ գնում է հեղինակը՝ առավել վարպետանալով, մեծացնելով իր կուտակած ներուժը, ինչին մենք ականատես ենք լինում հետագայում: Ժամանակի գրականագիտությունը բավականին լավ է ընդունել հեղինակի առաջին ժողովածու լույս ընծայման հանգամանքը՝ նշանավորելով այն գրված գրախոսություններով, վերլուծական հոդվածներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղաբեկյան Կ. (1988)**, Հրանտ Մաթևոսյան. Ծմակուտի վիպասքը, Երևան, Երևանի համալս. հրատ.:
2. **Ավետիսյան Զ. (1983)**, Սեփական ձեռագրի վկայությամբ, «Գրական թերթ», հոկտեմբերի 14, թիվ 43:
3. **Դեմիրճյան Պ. (1986)**, Ժամանակը և գրականության զարգացումը, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
4. **Եղիազարյան Ա. (1984)**, Պատմություններ ծանոթ մարդկանց մասին, «Սովետական գրականություն» հրատ., թիվ 6, էջ 134:
5. **Հախվերդյան Լ. (1984)**, Մտորումներ, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
6. **Պետրոսյան Ա. (1984)**, Գրողական ինքնության վկայությունը, «Սովետական գրականություն» հրատ., թիվ 8, էջ 104:
7. **Սիրադեղյան Վ. (2021)**, Դուռը, Երևան, «Վանո Սիրադեղյան» հիմնադրամ:

REFERENCES

1. **Aghabekyan K. (1988)**, Hrant Mat'evosyan. C'makowti vipasqy' /Hrant Matevosyan: The Novel of Tsmakut/, Yerevan, Yerevan University Press.
2. **Avetisyan Z. (1983)**, Sep'akan d'er'agri vkayowt'yamb /According to the Author's Own Manuscript/, Grakan Tert [Literary Newspaper], October 14, , No. 43.
3. **Demirchyan P. (1986)**, Jhamanaky' ev grakanowt'yan zargacowmy' /Time and the Development of Literature/, Yerevan, "Soviet Writer" Publishing House.
4. **Yeghiazaryan A. (1984)**, Patmowt'yownner c'anut' mardkanc masin /Stories About Familiar People/, Soviet Literature, No. 6, p. 134.
5. **Hakhverdyan L. (1984)**, Mtorowmner /Reflections/, Yerevan, "Soviet Writer" Publishing House.
6. **Petrosyan A. (1984)**, Groghakan inqnowt'yan vkayowt'yowny' /Testimony of Literary Identity/, Soviet Literature, No. 8, p. 104.

7. **Siradeghyan V. (2021)**, Dowr'y' /The Door/, Yerevan, “Vano Siradeghyan” Foundation.

Ованнес Овакимян

Сборник Воскресенье Вано Сирадехяна как творческий рубеж автора

Заключение

***Ключевые слова и выражения:** проза, рассказ, Вано Сирадехян, сборник Воскресенье, психология, литературный дебют, литературная критика.*

В статье подробно анализируется первый литературный сборник Вано Сирадехяна — Воскресенье, который ознаменовал начальный этап его творческого пути и стал важной вехой в истории современной армянской прозы. Уже с 1978 года Сирадехян был знаком литературным кругам благодаря публикации своих первых рассказов в таких изданиях, как Гарун, где его стиль, новизна взгляда и тематическая направленность сразу привлекли внимание критиков и читателей. Появление сборника Воскресенье стало логическим продолжением этого интереса. В нём чётко проявляется индивидуальный авторский почерк, стремление к исследованию психологии «маленького человека», раскрытию его внутреннего мира, переживаний, противоречий и постепенных душевных сдвигов. Сирадехян демонстрирует исключительную наблюдательность, точность в описании повседневности и умение превращать обыденное в художественно значимое. Герои его рассказов — люди, находящиеся на периферии общественной жизни, чьи судьбы становятся фокусом глубокого анализа. Воскресенье не только закрепило имя автора в литературе, но и определило направления его последующей прозы, где будут развиваться те же социальные, нравственные и экзистенциальные мотивы.

Hovhannes Hovakimyan

Vano Siradeghyan's Sunday collection as a creative landmark**Conclusion**

Key words and expressions: *prose, short story, Vano Siradeghyan, Sunday collection, psychology, literary debut, literary criticism.*

The article explores Vano Siradeghyan's first literary collection, Sunday, which marks the beginning of his creative journey. From as early as 1978, Siradeghyan had already made a name for himself in literary circles through the publication of his initial works in the periodical Garun (Spring). The appearance of his early short stories attracted significant attention, and the subsequent release of Sunday became a key milestone in shaping his literary trajectory. The collection showcases the author's sharp observational skills and his ability to capture subtle psychological nuances. Siradeghyan's stories focus on the struggles of the "little man" — the ordinary individual — offering insight into their inner world, personal dilemmas, and mental transformations. Through detailed portrayals of character and emotion, the collection reflects the author's early interest in the psychological depth of human experience. Sunday thus stands as a defining point in Siradeghyan's literary development and sets the tone for many of the themes he would later explore.

Հովհաննես Հովակիմյան – Երևանի պետական համալսարանի Հայ բանասիրության ֆակուլտետի Հայ նորագույն գրականության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ նորագույն գրականություն, գրականության տեսություն: Հեղինակ է շուրջ 15 հոդվածների: hovhanneshovakimian.hh@gmail.com

Ованнес Овакимян – Аспирант кафедры современной армянской литературы и литературной критики факультета армянской филологии Ереванского государственного университета. Научные интересы: армянская

современная литература, теория литературы. Автор около 15 статей.
hovhanneshovakimian.hh@gmail.com

Hovhannes Hovakimyan – A PhD candidate at the Department of Modern Armenian Literature and Literary Criticism, Faculty of Armenian Philology, Yerevan State University. His research interests include modern Armenian literature and literary theory. He is the author of around 15 articles.
hovhanneshovakimian.hh@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 02.03.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 15.03.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.